«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՀԱՄԱԳՈՐԾԱՔՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

ԱՌԱՐԿԱ Ֆիզիկա

ՀԵՂԻՆԱԿ Լենա Խաչատրյան

ՄԱՐԶ Արմավիրի մարզ (Վաղարշապատի տարածաշրջան)

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Այգեշատի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

1. Ներածություն …… 3

2. Գրական ակնարկ …….…… 4

3. Գործնական համատեքստ …….. 14

4. Հետազոտության ընթացք …… 17

5. Եզրակացություն …….…….....20

6. Գրականություն …… 21

Ներածություն

Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը: Հասարակական բոլոր փոփոխությունները անդրադառնում են նաև կրթական համակարգին: Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ: Ներկայիս կրթական համակարգը ուսուցումը իրականացնելու համար հիմք է ընդունում խմբակային աշխատանքները: Այդպիսի մի ուսուցման մոտեցում է համագործակցային ուսումնառությունը:

Համագործակցային ուսումնառությունը որպես սովորողների ներգրավվածության բարձրացման միջոց, մեծ ներուժ ունի, ինչով էլ պայմանավորված է մեր կողմից ընտրված թեմայի արդիականությունը: Համագործակցային խմբային աշխատանքը հանրակրթական դպրոցում, կրթության, ուսուցման, դաստիարակության և մշակույթի զարգացման հիմնական բաղադրիչն է: Այն հանդիսանում է սովորողի շփման, հաղորդակցման, ճանաչողական կարողությունների ձևավորման միջոց, կյանքում հաջողությունների հասնելու գործիք:

Սովորողների մտածողության, երևակայության, այլ մարդկանց հանդեպ հանդուրժողականության, աշխարհայացքի, սեփական մտքերի, հույզերի, ապրումների, բարոյական արժեքների ձևավորումը և զարգացումը կատարվում է համատեղ աշխատանքի կատարման միջոցով, ինչին հասնելու համար ուսումնառության ընթացքում ճիշտ կազմակերպված խմբային քննարկումն ակտիվացնում է սովորողին, ստիպում մտածել, ծանր ու թեթև անել, կշռադատել, արժևորել ուսումնական նյութի մեջ քննարկվող մտքերը, ձեռք բերել հասակակիցների խմբում աշխատելու, սեփական տեսանկյունը հիմնավորելու, դիմացինին լսելու, հանդուրժելու, նրա հետ համագործակցելու սոցիալական հմտություններ, ինչն այդքան արդիական է այսօր և ինչի կարիքն զգացվում է ամենուրեք, ինչը նույնպես պայմանավորում է մեր ուսումնասիրության արդիականությունը:

Գրական ակնարկ

Աշխարհում կատարվող արագընթաց փոփոխությունների ժամանակաշրջանում աստիճանաբար փոփոխության են ենթարկվում և վերանայվում շրջապատող իրականության վերաբերյալ ընկալումները, որոնք ձգտում ենք համապատասխանեցնել կյանքի պահանջներին և լուծումներ տալ առաջադրվող խնդիրներին [6, էջ 89]: Ժամանակակից մանկավարժությունը, բացի առարկայական և մասնագիտական կրթություն ապահովելու խնդրից, ունի նաև մեկ այլ կարևոր խնդիր՝ սովորողներին արդեն դպրոցական տարիքից ընդգրկելու բազմապիսի հասարակական հարաբերությունների մեջ՝ ձևավորելով համագործակցային, խմբում ուրիշների հետ աշխատելու, ինքնուրույն որոշումներ կայացնելու և այդ որոշումների համար պատասխանատվություն կրելու կարողություններ:

Այսօր կարևորվում է աշակերտակենտրոն ուսուցումը, որի հիմքում ընկած են դասավանդման նորագույն մեթոդները և մեթոդական հնարները, որոնք նպատակ ունեն սովորողների մեջ ձևավորելու ուսման նկատմամբ դրական վերաբերմունք և ապահովում են սովորողի ակտիվ մասնակցությունն ուսումնական գործընթացին: Եթե նախկինում ուսուցման ընթացքում շեշտը դրվում էր հիմնականում գիտելիքի յուրացման և պարզ վերարտադրության վրա, ապա այսօր առավել կարևորվում է գիտելիքի յուրացման և կիրառման, գործնական հմտությունների ձեռք բերման կարողությունների զարգացումը: Նոր մոտեցումներն առաջնորդվում են մի կարևոր սկզբունքով՝ սովորել՝ կատարելով, սովորել՝ սովորեցնելով: Դա հնարավորություն կտա գիտելիքը դարձնել կիրառական, մեծացնել սովորողների հետաքրքրությունն ուսումնական նյութի նկատմամբ՝ միաժամանակ ապահովել սովորողների ակտիվ մասնակցությունն ուսումնական գործընթացին: Ուսուցիչն իր նպատակին հասնելու համար կարող է կիրառել ցանկացած մեթոդ և հնար՝ դասը արդյունավետ, մատչելի և հետաքրքրաշարժ դարձնելու միջոցով: Ուսուցիչն ազատ է մեթոդի և հնարի ընտրության հարցում: Ուսուցման մեթոդները չեն կարող լավը կամ վատը լինել, դրանք միայն կարող են համապատասխանել կամ

չհամապատասխանել այն նպատակներին, որոնց հասնելու համար օգտագործվել են [5, էջ 114]:

Համագործակցային ուսուցման կիրառման պատմությունը գալիս է դեռևս անտիկ ժամանակներից: Հին հռոմեացի փիլիսոփա Սենեկան պնդում էր, որ սովորեցնողը սովորում է կրկնակի: Ավելի ուշ, 17-րդ դարում Կոմենսկին հավատում էր, որ սովորողները շահում են երկու դեպքում էլ. երբ սովորում են ուրիշներից, կամ սովորեցնում են ուրիշին: 1700-ականներին Լանքաստերի և Բելլի կողմից Անգլիայում լայնորեն կիրառվում էր սովորողների փոխադարձ ուսուցման գաղափարը: Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս: Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում: «Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար»[3,18]:

Անցած դարասկզբին Ռուսաստանում նույնպես մեծ էր հետաքրքրությունը այդ մոտեցման նկատմամբ և հայտնի մանկավարժ-գիտնական Շացկին հենվելով Ամերիկյան և Եվրոպական երկրների փորձի վրա և ծանոթ լինելով Դյուիի տեսությանն ու դրա գործնական կիրառություններին՝ ուսուցման հիմքում դրեց համագործակցության

գաղափարը: 1918 թվականին, ուկրանիացի հայտնի մանկավարժ Ռիվինը խմբային աշխատանքի շնորհիվ հասավ նրան, որ սովորողները տաս ամսում յուրացրին գիմնազիայի ամբողջ դասընթացը: Ուսուցման խմբային մոտեցումների նկատմամբ հետաքրքրությունը վերածնվեց 1970-80 թվականներից: Դրանք հիմնված էին մինչ այդ կատարված գիտական լայն հետազոտությունների վրա, որոնք հիմք դարձան համագործակցային ուսուցման տեսության ամբողջացման, կիրառման ընթացակարգերի, տեսական ու գործնական հետագա մշակումների համար:

Համագործակցային ուսուցման տարածման և զարգացման գործում մեծ ներդրում ունի 1979 թվականին հիմնադրված համագործակցային ուսուցման միջազգային ասոցիացիան (IASCE): 1990-ական թվականներից արդեն համագործակցային ուսուցումը հանրաճանաչ դարձավ ուսուցիչների շրջանում: Համագործակցային ուսուցման ներդրման լայն հեռանկարների մասին է խոսում նաև ներկայումս դիտվող մի հետաքրքիր գործընթաց: 1990-ական թվականներից լայն թափով տարածվեց չափորոշիչների վրա հենված ուսուցման բարձր արդյունքներ ապահովելու մոտեցումը: Այժմ արձանագրվում է կրթական քաղաքականության վերաուղղորդում՝ ուսուցման արդյունքների սահմանման և դրանց անընդհատ չափման մոտեցումից դեպի կրթական գործընթացի խթանման և գործընթացի վրա ներդրումներ անելու քաղաքականությունը: Այս տեսանկյունից ուսուցման համագործակցային մեթոդը լայն հնարավորություններ է տալիս շեշտադրումը տեղափոխելու սովորելու գործընթացի վրա: Ներկայումս ուսուցման համագործակցային մեթոդները լայնորեն ներդրվում են Եվրոպական զարգացած՝ հատկապես սկանդինավյան երկրներում և Միացյալ Նահանգներում:

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում

անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ «Ուսուցչի գործը հասարակության շրջանում ամենից կարևորվող, ամենամեծ հնարամտություն պահանջող, օրեցօր ավելի գնահատվող մասնագիտություններից է: Այսօր հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են երեխաներին կառավարելու և օգնելու նոր եղանակներ, նաև՝ երեխաների արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումների խոր ընկալում»Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել: Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով:

Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար: Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը:

Սովորաբար ուսուցման ընթացքում խմբի անդամների միջև փոխկախվածություն կարող է առաջանալ երեք տարբեր ձևերով.

1. **Մրցակցային**. երբ խմբի անդամները ուսուցման նպատակներին հասնելու համար մրցում են միմյանց հետ: Նման մրցակցային իրավիճակում, երբ կան հաղթողներ՝ լինում են նաև պարտվողներ: Արդյունքում մրցակցությունը կարող է խափանել խմբի կայացման ընթացքը՝ խոչնդոտելով նպատակներին հասնելու համար համատեղ ջանքերի գործադրմանը:

2. **Անհատական**. սոցիալական փոխկախվածությունը կարող է վերանալ, որի արդյունքում խմբի անդամները առկախվում են իրենց խմբակիցների հաջողություններից

կամ ձախողումներից: Խմբային աշխատանքի ժամանակ նման բան տեղի է ունենում այն դեպքում, երբ յուրաքանչյուր սովորող կատարում է իր անհատական առաջադրանքը, որը կապ չունի մնացածների առաջադրանքների հետ:

3. **Համագործակցային**. խմբի անդամները համագործակցում են միմյանց հետ ընդհանուր նպատակին հասնելու համար և գիտակցում, որ իրենք կարող են դրան հասնել միայն այն դեպքում, երբ խմբի բոլոր անդամները հասնեն իրենց նպատակներին:

Դրական փոխկախվածությունը համագործակցային ուսուցման առաջին կարևոր առանձնահատկությունն է: Դրական փոխկախվածությունն այն զգացումն է, որ խմբի յուրաքանչյուր անդամ կապված է խմբի մյուս անդամների հետ այնպես, որ չի կարող հասնել հաջողության, քանի դեռ նրանք չեն հասել հաջողության և հակառակը. խմբի բոլոր անդամները գիտակցում և զգում են, որ իրենք «սուզվելու են կամ լողալու են միասին»: Որքան ավելի ուժեղ է դրական փոխկախվածությունը, այնքան ավելի արդյունավետ կլինի համագործակցային ուսուցումը: Շատ դեպքերում դասարանում ակնհայտ է դրական փոխկախվածության առկայությունը, երբ սովորողներն աշխատում են փոքր խմբերով՝ փոխանակելով մտքեր և ռեսուրսներ՝ միմյանց տրամադրելով օգնություն և հանդես բերելով համատեղ նպատակներին հասնելու նվիրվածություն:

Խմբերում դրական փոխկախվածություն ստեղծելու համար ուսուցիչը պետք է տա խմբային ընդհանուր նպատակ հետապնդող առաջադրանքներ: Պետք է նշել, որ այս տարրի ապահովման շնորհիվ խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու և աջակցելու մթնոլորտ: Սովորողների ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն, նրանց մոտ ձևավորվում է այն մոտեցումը, որ միասին կարելի է հասնել ավելի մեծ նվաճումների քան առանձին-առանձին: Դրական փոխկախվածությունը նպաստում է նաև խմբում հանդուրժողականության և վստահության մթնոլորտի ձևավորմանը: Նպատակին հասնելու համատեղ քննարկումներն ու ձգտումները օգնում են ապահովելու բարենպաստ փոխհարաբերություններ խմբի անդամների միջև [2]:

Երբ խմբերում արդեն ստեղծված է դրական փոխկախվածություն, անհրաժեշտ է առավելագույնի հասցնել սովորողների կողմից միմյանց սատարելու գործոնը՝ օգնելով, աջակցելով, նպաստելով, խրախուսելով և գովաբանելով միմյանց սովորելու ջանքերը:

Համագործակցային խմբերով աշխատելու ընթացքում, ի տարբերություն ավանդական ուսուցման, սովորողները հաղորդակցվում են ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ: Դրական փոխկախվածությունը հանգեցնում է դրական / խթանող փոխազդեցության, ինչը համագործակցային ուսուցման երկրորդ կարևորագույն տարրն է: Այս դեպքում խմբի անդամներն աշխատում են դեմ-դիմաց նստած և ոչ թե շարքերով, որը կապահովի խմբի անդամների արդյունավետ հաղորդակցումը և նրանց առավելագույն մասնակցությունը խմբային քննարկումներին: Կարելի է ասել, որ այս տարրը հիմնականում ունի տեխնիկական բնույթ և այն ապահովելու համար խմբի անդամները պետք է նստեն դեմ-դիմաց և հաղորդակցվելիս տեսնեն միմյանց: Հաճախ այն անվանում են «համագործակցային» կամ «միասին սովորելու» դիրք: Խթանող փոխազդեցության արդյունքում սովորողներն ավելի արդյունավետ են համագործակցում, փոխանակում են անհրաժեշտ ինֆորմացիա և ռեսուրսներ, ավելի արդյունավետ են մշակում, վերլուծում ինֆորմացիան, ապահովում են հետադարձ կապ՝ խմբի հետագա աշխատանքի բարելվաման նպատակով, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

Կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն այդ հմտություններին տիրապետելը,ալև արժևորելը և կյանքում դրանք համապատասխան իրավիճակներում կիրառելը: Ուստի մեր խնդիրն է պատմության դասաժամերին համագործակցային ուսուցման շնորհիվ աշակերտների մոտ ձևավորել այնպիսի որակներ, զարգացնել այնպիսի հմտություններ, որոնք համահունչ կլինեն կրթության ժամանակակից պահանջներին, իսկ շրջանավարտը՝ կրթական հաստատությունում ձեռք բերածը կկարողանա կիրառել կյանքում:

Աշխատանքում կխոսենք Սահլբերգի կողմից առաջադրված մասնակցությունը խթանող տարբեր միջոցներից մեկի, զույգերով աշխատանքի, «Շրջվիր դեպի զույգդ» և շատերի կողմից կիրառվող «Պրիզմա» մեթոդի կիրառելիության և արդյունավետության մասին: Ուսուցիչը միանգամից, մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը: Նա պետք է որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի, հնարի ընտրություն: Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները, որոնք

լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում. բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների ընտրությունը կախված է նաև՝

- դասի տիպից ու կառուցվածքից,
- ուսումնական նյութի բովանդակությունից,
- աշակերտների տարիքից,
- դասարանում աշակերտների թվաքանակից,
- պատրաստվածության մակարդակից,
- շահագրգռվածությունից ու հետաքրքրությունից,
- ուսումնադիտողական պարագաների առկայությունից ,
- ժամաքանակից,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակից և այլ գործոններից [1]:

Համագործակցային ուսուցման նախապայմաններից մեկն այն է, որ սովորողը հաշվետու է և անձնական պատասխանատվություն է կրում իր ուսուցման ընթացքի և արդյունքների համար կամ խմբի յուրաքանչյուր անդամ գիտակցում է, որ իր ջանքերն անհրաժեշտ են խմբին՝ հաջողության և ընդհանուր նպատակներին հասնելու համար: Համագործակցային խմբերում անհատական հաշվետվությունը նշանակում է, որ խմբի յուրաքանչյուր անդամ պատասխանատվություն է կրում խմբի ուսուցման արդյունքների համար և վստահաբար գիտի, որ իր ներդրումը կարևոր է խմբի հաջողությունն ապահովելու համար: Անհատական հաշվետվությունն ու պատասխանատվությունն առկա են, երբ առանձին գնահատվում է յուրաքանչյուր աշակերտի առաջադիմությունը և դրա մասին տեղեկացված են խմբի բոլոր անդամները: Այստեղ կարևոր է, որ խմբի անդամներն իրազեկ լինեն, թե խմբի անդամներից ով ինչպիսի օգնության և օժանդակության, խրախուսման կարիք ունի՝ առաջադրանքը կատարելու համար: Նմանապես էական է, որ խմբի անդամները գիտակցեն, որ չեն կարող «գլուխ պահել»՝ մնացածների հաշվին: Համագործակցային ուսուցման հիմնական նպատակը խմբի յուրաքանչյուր անդամին ավելի ուժեղ և ինքնուրույն դարձնելն է: Սովորողները սովորում են միասին, որպեսզի հետագայում հանդես գան որպես ուժեղ անհատներ:

Համագործակցային ուսուցման ընթացքում սովորողի հաշվետու լինելն ու անձնական պատասխանատվությունը բարձրացնելու ամենահզոր միջոցներից է

յուրաքանչյուր սովորողի անհատական ներդրման գնահատումը, որի դեպքում արդյունքների մասին տեղեկացվում է համապատասխան խմբին և սովորողին: Սովորողի ներդրման գնահատումը կարող է հիմնված լինել ուսուցչի կողմից իրականացվող դիտարկումների կամ կարճ գրավոր կամ բանավոր թեսթերի արդյունքների վրա: Արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ է, որ խումբը տեղյակ լինի խմբի և յուրաքանչյուր անհատ անդամի ուժեղ և թույլ կողմերի մասին, որը կօգնի ճշտել այն ոլորտները, որտեղ զգացվում է օգնության և խրախուսման կարիք: Ավելին, անհրաժեշտ է, որ սովորողները հասկանան և որոշակիորեն զգան, որ իրենք չեն կարող խուսափել պատասխանատվությունից՝ սեփական առաջադրանքը փոխանցելով խմբի որևէ այլ անդամի:

Խմբային առաջադրանքներ կատարելիս աշակերտներն անցնում են այնպիսի իրավիճակներով, որոնք պահանջում են բարդ փոխհարաբերություններ և սոցիալական հմտություններ: Հաճախ այդ հմտություններին չտիրապետելու պատճառով խմբային աշխատանքը ձախողվում է: Համագործակցային ուսուցման հաջողության համար պահանջվում է փոքր խմբերում աշխատելու համագործակցային հմտությունների զարգացում: Այդ հմտությունները ներառում են վարքագծային այնպիսի որակներ, ինչպիսիք են միջանձնային փոխհարաբերություններում վստահության ստեղծումը, ղեկավարման հմտությունները, հաղորդակցումը և միմյանց աջակցելը, որոշումներ կայացնելու և կոնֆլիկտներ լուծելու հմտությունները: Միմյանց լսելու, առաջացած թյուրըմբռնումներն ու կոնֆլիկտները լուծելու, միմյանց խրախուսելու, համատեղ աշխատանքը պլանավորելու և իրականացնելու վարժությունների օգտագործումը նպաստում է սովորողների մոտ համապատասխան հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Եթե սովորողներն առաջին անգամ են աշխատում խմբերով, ապա ուսուցչի համար գերխնդիր է դառնում նրանց սովորեցնել համագործակցելու հմտություններ [4, էջ 116]:

Խմբային գործընթացը խմբի անդամների կողմից հաջողությունների և արդյունավետ փոխհարաբերությունների, խմբային համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլն է: Խմբերը նկարագրում են խմբի անդամների օգտակար և ոչ օգտակար գործողությունները և որոշումներ կայացնում, թե ո՞ր վարքագիծը կամ

գործողությունները պետք բարելավել կամ զարգացնել: Ուսուցիչը խմբերին այդ նպատակով պետք է տրամադրի անհրաժեշտ ժամանակ և ընթացակարգեր: Նման քննարկումները հնարավորություն են ընձեռում ամրապնդելու խումբը՝ պահպանելով արդյունավետ փոխհարաբերությունները խմբի ներսում: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը, մղում են նրանց սոցիալական հմտությունների շարունակական կիրառման:

Համագործակցային ուսուցման վերը նկարագրված հինգ տարրերը գործնականում կիրառվում են առաջադրանքի կատարման ժամանակ, որի ընթացքում սովորողները կարիք ունեն համագործակցելու: Արդյունավետ համագործակցային աշխատանքը հնարավոր է միայն այն դեպքում, երբ առաջադրանքը, որի վրա աշխատում է խումբը, տրված է այնպես, որ այն կատարելու համար պահանջվում է թիմային աշխատանք: Ահա այս տիպի առաջադրանքները Պասի Սալբերգը անվանում է փոխներգործուն կառուցվածք ունեցող առաջադրանք և այն դիտարկում՝ որպես համագործակցային ուսուցման վեցերորդ տարր: Շատ հաճախ խմբի վատ աշխատանքի պատճառներից մեկը առաջադրանքի սխալ ընտրությունը կամ կազմակերպումն է: Ակնհայտ է, որ ոչ բոլոր առաջադրանքներն են հարմար համագործակցային ուսուցման նպատակների համար, քանի որ դրանք չեն նպաստում ներխմբային փոխազդեցությանը [7, էջ 176]:

Համագործակցային ուսուցումն ապահովելու համար ընտրված առաջադրանքը պետք է ստեղծի դրական փոխկախվածություն սովորողների (զույգերի կամ խմբերի) միջև, խմբի յուրաքանչյուր անդամի մոտ ձևավորի անհատական հաշվետվության ու պատասխանատվության զգացում, կազմակերպվի դեմ առ դեմ փոխազդեցության սկզբունքով, նպաստի սոցիալական հմտությունների դրսևորմանը, ավարտվի խմբային գործընթացով: Համագործակցային ուսուցման առաջադրանք պատրաստելիս, ուսուցիչը պետք է հետևի երեք հիմնական պայմանների. ա) խմբի բոլոր անդամները պետք է ունենան մասնակցելու դրդապատճառ, բ) առաջադրանքը պետք է խմբի բոլոր անդամներին արտահայտվելու հնարավորություն ընձեռի, գ) խմբի անդամները պետք է առաջադրանքը կատարելիս ընտրություն կատարեն և որոշում ընդունեն:

Գործնական համատեքստ

«Ֆիզիկա» ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում կիրառվող համագործակցային դաս իրականացնելու համար ուսումնական նյութը, դասապլանները, դասապրոցեսը, առաջադրանքները կառուցում եմ այնպես, որ

սովորողները համագործակցելու կարիք ունենան: Ուսումնական նյութը, ուսուցման մեթոդները համապատասխանեցնում եմ «Ֆիզիկա» առարկայի, կոնկրետ թեմայի կարիքներին, չափորոշչային պահանջներին: Հաշվի եմ առնում նաև սովորողների խմբային և անհատական պատասխանատվությունը: Խմբային աշխատանքի պարագայում պետք է կարևորել ինչպես ամբողջ խմբի աշխատանքի արդյունքը, այնպես էլ խմբի յուրաքանչյուր անդամի ներդրումը: Վերջինս հաշվի չառնելու դեպքում, որոշ սովորողներ պարբերաբար «գլուխ են պահում», որի արդյունքում համագործակցային ուսուցումը ձախողվում է: Համագործակցային խմբային աշխատանքը ուսուցման կազմակերպման ձև է, որը սովորողներին հնարավորություն է տալիս իրենց գիտելիքներն ու փորձը դասընկերների հետ փոխանակել, համատեղ խնդիրներ լուծել: Ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով:

Խմբերով աշխատանքը էապես մեծացնում է աշակերտի ակտիվությունը դասապրոցեսում: Հնարավոր չէ արդյունավետ սովորել՝ միայն դիտողի, լսողի, պասիվ վիճակում գտնվելով: Սովորողն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է ուսուցման գործընթացին: Խումբը կարող է ձևավորվել սովորողների ցանկությամբ կամ էլ ուսուցչի կողմից՝ նախապես ընտրելով: Համագործակցային խմբի սովորողները համագործակցում են միմյանց հետ ընդհանուր նպատակին հասնելու համար, և պետք է հասկանան, որ հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից: Շատ հաճախ խմբի անհաջող աշխատանքի պատճառներից մեկը առաջադրանքի սխալ ընտրությունը կամ կազմակերպումն է: Ակնհայտ է, որ ոչ բոլոր առաջադրանքներն են հարմար խմբային աշխատանքի համար:

Համագործակցային ուսուցման առավելությունները հիմնվում են լուրջ ուսումնասիրությունների և հետազոտությունների վրա: Համագործակցային ուսուցման կազմակերպումը հնարավորություն է ընձեռում սովորողներին սովորել իրենց էությանը համապատասխան ձևով, ընդհանուր նպատակի իրագործման համար ներդնել իրենց առավելությունները՝ ստանալով նաև դասընկերների աջակցությունը: Համագործակցային ուսուցումը մղում է սովորողներին ավելի լավ սովորելու: Բոլոր

սովորողների համար ստեղծվում է բարենպաստ միջավայր, որում նրանք կարողանում են արտահայտել իրենց ուժեղ կողմերը: Համագործակցային ուսուցումը արդյունավետ է այն դեպքում, երբ առկա է ոչ միայն սովորող - սովորող, սովորող -ուսուցիչ համագործակցությունը, այլև՝ ուսուցիչ-ուսուցիչ համագործակցությունը: Փորձը ցույց է տալիս, որ սովորողները շատ ավելի հեշտ են հարմարվում համագործակցային աշխատառճին, քան ուսուցիչները: Մինչդեռ համագործակցային ուսուցման գաղափարն անավարտ է առանց ուսուցչի համագործակցային աշխատառճի:

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապատելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Համագործակցային ուսուցման ներդրումը ամենևին չի նշանակում հրաժարում ավանդական մոտեցումներից: Դա պարզապես նշանակում է աշխատանքի արդյունավետությունը բարձրացնող ևս մեկ միջոցի ներդրում: Ինչպես նոր գործիքի ներդրումը բարձրացնում է արհեստավորի աշխատանքի արդյունավետությունն ու որակը, նույն ձևով համագործակցային ուսուցումը հնարավորություն է տալիս ուսուցչին դասապրոցեսը դարձնելու ավելի բազմազան ու հետաքրքիր:

Համազված եմ, որ մանկավարժական նշանակությունից բացի համագործակցային ուսուցումն ունի նաև հասարակական գործառույթ: Համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար: Այսօր անհատականությունների վրա հիմնվելով հնարավոր չէ հաջողության հասնել պետական և հասարակական խնդիրներ լուծելիս: Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է սովորողների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա: [6, էջ 20] Իր բազմաթիվ առավելությունների կողքին համագործակցային ուսումնառությունն ունի նաև որոշ սահմանափակումներ.

- Ժամանակատար է:
- Դժվար է վերահսկել բոլոր աշակերտներին:
- Առանձին աշակերտներ կարող են գերիշխող դեր ունենալ խմբերում:
- Դասարանում կարող է ավելորդ աղմուկ առաջանալ:

- Ուսուցիչը կարևոր դեր ունի համագործակցային ուսուցման կազմակերպման գործընթացում:
- Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակային մոտեցումը, այլև սովորողների ուսումնական գործողությունները և գնահատումը: Խմբային աշխատանք կազմակերպելիս ուսուցիչը պետք է պահպանի հետևյալ պայմանները.
- Առաջադրանքը պետք է հստակ ու պարզ ներկայացնել:
- Խումբը պետք է տեղեկացված լինի ժամանակային սահմանափակումներին:
- Խմբի և դասարանի աշակերտները պետք է միմյանց լսեն, եթե նույնիսկ համաձայն չեն իրար հետ:
- Խմբային քննարկումների ժամանակ ոչ ոք չպետք է իշխի մյուսների նկատմամբ:
- Խրախուսել մասնակցությունը և հարցերը:
- Քննադատել կատարումը և ոչ թե անձին:
- Համագործակցային ուսուցման ընթացքում երբեմն թույլ են տրվում սխալներ, որոնք հիմնականում կատարվում են ոչ ճիշտ պլանավորման հետևանքով:Ստորև ներկայացնում ենք մի քանի բնորոշ սխալներ.
- Խմբերը մեծ են:
- Աշակերտներին չեն ուսուցանվել համագործակցային հմտություններ:
- Համագործակցային դասերը մանրամասն պլանավորված չեն:
- Խմբերին տրվում են միանգամից բարդ առաջադրանքներ:
- Մանրամասն չի դիտարկվում խմբային առաջադրանքի կատարման ընթացքը:

Փոքր խմբերով աշխատանք կիրառելու սկզբնական փուլում համագործակցային ուսուցման հավանականությունը փոքր է: Բայց պետք է հետևողականորեն ձգտել համագործակցային ուսուցման մթնոլորտի ստեղծմանը, որպեսզի արդարացված և արդյունավետ լինի խմբային աշխատանքը:

Հետազոտության ընթացք

Ներկայացնում եմ համագործակցային խմբային աշխատանք իմ փորձառությունից, որը կիրառել եմ իններորդ դասարանում «Հաղորդիչների հաջորդական միացում» թեման ուսումնասիրելիս, որտեղ սովորում են ուսումնառության տարբեր կարողություններ ունեցող սովորողներ՝ 10 աղջիկ և 6 տղա: Սովորողներից ոմանք արագ են ընկալում նոր նյութը, մյուսներից լրացուցիչ ժամանակ է պահանջվում ընկալման համար, իսկ մի մասին էլ լրացուցիչ միջամտություն է հարկավոր: Դասարանում կա նաև մեկ ԿԱՊԿՈՒ աշակերտ, որը փորձերին ներգրավվելիս է ոգևորվում:

Դասապլան

Թեմա՝ - Հաղորդիչների հաջորդական միացում

Օգտագործվող սարքեր՝- Մարտկոց, ամպերաչափ, վոլտաչափ, հաղորդալարեր, երկու լամպ, բանալի

Հիմնական հասկացություններ – հոսաքի ուժ, լարում, դիմադրություն

Դասի նպատակը – Սովորողը կարողանա.

- մեկնաբանել թե ինչպես պետք է միացնել հաղորդիչները հաջորդական միացման դեպքում,
- հաշվել լարումը հաջորդաբար միացված սպառիչներից կազմված տեղամասում,
- որոշել հաջորդաբար միացված սպառիչների տեղամասի դիմադրությունը:

Վերջնարդյունքները- Սովորողը կկարողանա.

- նկարագրել հաղորդիչների հաջորդական միացումը,
- թվարկել հաջորդական միացման դեպքում շղթան կազմող սարքերի անվանումները,
- համեմատել, թե ինչպես կփոխվի լարումը տարբեր դիմադրությունների դեպքում,
- վերլուծել ստացված արդյունքները, լուծել համապատասխան խնդիրներ, գործնական ճանապարհով գտնել հոսանքի ուժի, լարման օրինաչափությունները հաջորդական միացման ժամանակ:

Գնահատում. Միավորային (ոգեշնչող խոսքերով գնահատում ենք սովորողներին) կամ ուսուցանող(բնութագրող):

Ուսումնառության ընթացքը. Սովորողներին ներկայացնել, թե ինչ է նշանակում հաղորդիչները հաջորդական միացնել: Բերել օրինակներ հաջորդական միացումից, որոնց հետ հաճախ են առնչվել: Հավաքել շղթա՝ կազմված մարտկոցից, երկու լամպից,

ամպերաչափից, վոլտաչափից, բանալուց և բացատրել, որ այն իրենից ներկայացնում է հաջորդական միացում: Հավաքած շղթան գծել էլեկտրոնային գրատախտակին: Հավաքած շղթայի տվյալներով կազմել խնդիր և լուծել՝ստանալով հաջորդական միացման բանաձևերը:

Առանցքային հարցեր.

- Ի՞նչ է իրենից ներկայացնում էլեկտրական շղթան:
- Ինչպե՞ս պետք է հավաքել հաջորդական միացման դեպքում:
- Հաջորդական միացման ժամանակ ինչի՞ է հավասար հոսաքնի ուժը, լարումը, դիմադրությունը

Դասարանը բաժանել եմ 4 խմբերի, յուրաքանչյուր խմբին տվել եմ համապատասխան առաջադրանք:

Տրվել է համապատասխան սարքեր՝ մարտկոց, հետազոտվող հաղորդիչ, ամպերաչափ, վոլտաչափ, ռեոստատ, բանալի, միացնող հաղորդալարեր:

Հանձնարարելով առաջադրանքները հետևում էի խմբերի անդամների աշխատանքներին, անհրաժեշտության դեպքում ուղղորդում՝ շտկելով թյուրըմբռնումները:

Յուրաքանչյուր խումբ իր աշխատանքը ներկայացրեց պաստառի վրա: Սովորողները պաստառի վրա գծապատկերներ արեցին, հավաքագրվեցին փորձի տվյալները, կատարեցին համապատասխան հաշվարկներ և ստացված արդյունքները տեղադրեցին պաստառի վրա: Յուրաքանչյուր խմբի պատասխանատուն ներկայացրեց իր խմբի աշխատանքը: Այս գործնական աշխատանքը տարբեր առաջընթաց ունեցող սովորողների համար և՛ հետաքրքիր է, և՛ պարունակում է խմբերի սովորողներին համապատասխան վերլուծություններ, որոնց միջոցով գնահատվում է սովորողների ըմբռնումը բացահայտվում և շտկվում թյուրըմբռնումները:

Խմբային աշխատանքի ընթացքում խմբի անդամները շահագրգռված էին, որ իրենց ընկերները բարեխղճորեն կատարեն առաջադրանքները, որովհետև յուրաքանչյուրի մասնակցությունը ազդում է խմբի ընդհանուր գնահատականի վրա:

Առաջադրանքը ավարտելուց հետո սովորողները հաշվետվություն ներկայացրին, թե ինչը ինքնուրույն արեցին, ինչում օժանդակություն ստացան, ինչը լավ չէին յուրացրել, ինչ պարզեցին իրենց համար, ինչը մնաց անհասկանալի: Անհասկանալի հարցերը նորից

բացատրվեցին ուսման առաջավոր սովորողների կողմից և լրացումներ արվեցին իմ կողմից։

Դասը հիմնականում հաջողված էր։ Աշակերտները հետաքրքրված էին աշխատանքով։

Եզրակացություն

Ցանկության դեպքում չկա ուսումնական առարկա, որի շրջանակներում հնարավոր չլինի կազմակերպել և կատարել առաջադրանք համագործակցային ուսումնառության միջոցով: Դրա համար անհրաժեշտ է որոշել դասի նպատակը, խմբերի կազմը,նախապատրաստել անհրաժեշտ նյութեր, փոխներգործուն առաջադրանք, աշակերտներին պատմել համագործակցային խմբով աշխատելու նպատակների մասին, ներկայացնել առաջադրանքը, իսկ հետո, երբ խմբերն սկսեն աշխատել, վերահսկել աշխատանքը և միջամտել միայն անհրաժեշտության դեպքում: Դասի վերջում պետք է գնահատի աշակերտների գիտելիքները և պարզել, թե որքանով արդյունավետ էին դասի ժամանակ կիրառված համագործակցային ուսումնառության մեթոդները: Որպես ուսուցիչ, ով ուսումնական գործընթացում հաճախ է կիրառում համագործակցային խմբերով աշխատելու մեթոդները, գտնում եմ, որ դա բոլորովին էլ հեշտ չէ, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից: Կարող են տարիներ պահանջվել համագործակցային ուսուցման հմտություններին տիրապետելու համար և փորձել դասավանդել այնպես, ինչպես սկսել են անել ուրիշները: Իմ կարծիքով կարևոր է, որ աշակերտները սովորեն ինքնուրույն աշխատել, այլ ոչ թե արտագրեն միմյանցից: Որպես կանոն, սովորողները կոլեկտիվում դժվարանում են աշխատել, քանի որ նրանցում խիստ զարգացած է մրցակցության ոգին, սակայն համագործակցային ուսումնառությունը նպաստում է աշակերտներին ուսումնական գործընթացում ներգրավել:

Ուսուցիչները կարող են համագործակցային ուսուցման անցնել աստիճանաբար, սկզբում մեկ թեմայի ուսուցումը կամ մեկ դասարանի հետ աշխատանքները կազմակերպել համագործակցային ուսումնառության մոտեցումների միջոցով, հետո, երբ երեխաները ձեռք կբերեն խմբային աշխատանքի հմտություններ, կարելի է մյուս դասերի ուսուցման ժամանակ նույնպես կիրառել համագործակցային խմբերով աշխատելու եղանակները: Այս մեթոդը կարելի է կիրառել միայն այն ժամանակ, երբ ուսուցիչը և սովորողները լիովին ըմբռնել են նրա իմաստը: Համագործակցային ուսումնառության կազմակերպումը օգնում է բարձրացնել դասապրոցեսին ներգրավվածությունը:

Գրականություն

1. Արնաուդյան Ա. , Գյուլբուդաղյան Ա. , Խաչատրյան Ս. , Խրիմյան Ս. , Պետրոսյան Մ. Երևան: Կրթության ազգային ինստիտուտի հարատարակչություն: 2004:
2.Ա. Հովհաննիսյան, Կ.Հարությունյան «Համագործակցային ուսուցում»:
3. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, 96 էջ:
4.Pasi Salberg. *"Principles of Co-operative Learning"*, University of Helsinki. https://jasce.jp/iasce/www.iasce.net/home/resources/manchester-2002-conference-workshop-abstracts.html
5.cooperative learning: theory, principles, and techniques https://www.researchgate.net
6.Кашлев С.С. Интерактивные методы обучения / С.С. Кашлев.- М.: Мозаика-Синтез, 2015.- 114 с.
7.Панина Т.С., Вавилова Л.Н. Современные способы активизации обучения. Учеб. пособ. / М.В. Кларина – М.: Издат. центр «Академия», 4-е изд., стер. - М.: 2008. - 176 с.